Արձանագրություն N 3

ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-ՀԱՄ-ԿՏՏՎ/2023-L-46 *ծածկագրով գնանշման հարցման մրցույթի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի*

ք.Երևան *<< 05 >> << **04** >> **2023թ.***

ՀՀ ոստիկանության կարիքների համար ***համակարգչային մոնիտորի և դյուրակիր համակարգչի*** *ձեռքբերման նպատակով հայտարարված* ***ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-ՀԱՄ-ԿՏՏՎ/2023-L-46*** *ծածկագրով ընթացակարգի նիստում արձանագրվեց՝*

ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-ՀԱՄ-ԿՏՏՎ/2023-L-46 *ծածկագրով ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակիցներ՝* ***ՍԻԳՄԱ 14 ՍՊԸ–ի և ՄՍ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ ՍՊԸ-ի*** *կողմից ներկայացրած հայտերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես.* ***ՍԻԳՄԱ 14 ՍՊԸ****-ի կողմից ներկայացրած հայտում հրավերով պահանջվող 1-ին չափաբաժնի (համակարգչային մոնիտոր CPV-30237490/3) տեխնիկական բնութագիր, ֆիրմային անվանում, ապրանքային նշան, մակնիշ և արտադրողի անվանում չի ներկայացվել, վերջինիս կողմից բացակայում է նաև իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվություններ պարունակող կայքէջի հղումը:*

Մասնակից՝ ***ՄՍ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ ՍՊԸ-ի*** *կողմից ներկայացրած հայտում հրավերով պահանջվող 2-րդ չափաբաժնի (դյուրակիր համակարգիչներ CPV-30211200/2) տեխնիկական բնութագիր, ֆիրմային անվանում, ապրանքային նշան, մակնիշ և արտադրողի անվանում չի ներկայացվել, վերջինիս կողմից բացակայում է նաև իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվություններ պարունակող կայքէջի հղումը:*

ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-ՀԱՄ-ԿՏՏՎ/2023-L-46 *ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել* ***30.03.2023*** *թվականին մասնակիցներին տրամադրել մեկ /1/ մեկ աշխատանքային օր անհամապատասխանությունների շտկում կատարելու համար: ՍԻԳՄԱ 14 ՍՊԸ-ի կողմից անհամապատասխանություններ շտկումը կատարված է թերի, վերջինիս կողմից ներկայացվել է տեխնիկական բնութագիր, ֆիրմային անվանում, ապրանքային նշան, մակնիշ և արտադրողի անվանում, ինչպես նայև իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվություններ պարունակող կայքէջի հղումը, սակայն նշված հղումով որևէ տվյալներ չկան առկա:*

Իսկ ՄՍ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ ՍՊԸ-ի կողմից անհամապատասխանությունները չեն շտկվել:

1. ***Հանձնաժողովը որոշեց՝***

- *Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված "Գնումների գործընթացի կազմակերպման" կարգի* ***42-րդ կետի****,* ***ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-ՀԱՄ-ԿՏՏՎ/2023-L-46*** *ծածկագրով ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակիցներ* ***ՄՍ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ ՍՊԸ–ի*** *և* ***ՍԻԳՄԱ 14 ՍՊԸ-ի*** *հայտերը ենթակա են մերժման:*

- *Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի **6–րդ հոդվածի 6–րդ կետի**, ՄՍ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ ՍՊԸ–ին և ՍԻԳՄԱ 14 ՍՊԸ-ին ներառել գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, քանի որ վերոնշյալ մասնակիցների կողմից անհամապատասխանություններ չեն շտկվել:*

ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-ՀԱՄ-ԿՏՏՎ/2023-Լ-46 *ծածկագրով գնման ընթացակարգը **1-ին և 2-րդ** չափաբաժիններով համարվում է չկայացած, քանի որ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը մերժվել են, ուստի հանձնաժողովը, հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-րդ կետը, **1-ին և 2-րդ** չափաբաժիններով ընթացակարգը հայտարարում է չկայացած:*

*"Գնումների մասին" ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում սույն հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև **10-րդ օրացուցային** օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:*

Ընդունվեց որոշում՝ *կողմ 3 դեմ 0 :*

Հանձնաժողովի Նախագահ՝

ոստիկանության գնդապետ *Ա. Թամազյան*

Հանձնաժողովի անդամներ՝

ոստիկանության փոխգնդապետ *Մ. Բաբայան*

ոստիկանության մայոր *Շ. Հարությունյան*

Հանձնաժողովի քարտուղար՝

ՀՀ ՔՀԾ 1-ին դասի առաջատար ծառայող *Լ. Սահակյան*